# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Վարդենիկ համայնք, հեռ026260086, vardenikgp@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«14» հոկտեմբերի 2019 թվականի N 30

### ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով,**

**Վարդենիկ համայնքի ավագանին որոշում է հաստատել նիստի հետևյալ օրակարգը**

1. ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| Համայնքի ավագանի | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| 1. Ալեքսանյան Է. | | | |
| 2. Բադալյան Կ. | | | |
| 3. Բադալյան Ա. | | | |
| 4. Ձիրոյան Ս. | | | |
| 5. Ղազարյան Վ. | | | |
| 6. Մուրադյան Ա. | | | |
| 7. Մովսիսյան Ռ. | | | |
| 8. Պետրոսյան Գ. | | | |
| 9. Պետրոսյան Մ. | | | |
| 10. Սևոյան Ս. | | | |

Վարդենիկ համայնքի ղեկավար Հ.Հովեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Վարդենիկ համայնք, հեռ026260086, vardenikgp@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

« 14 » հոկտեմբերի 2019 թվականի N 31

## ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների Նախարարության 23.07.2014թվականի թիվ 463-Ն հրամանը՝

***Վարդենիկ համայնքի ավագանին որոշում է.***

1.Վարդենիկ համայնքի 2019թվականի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ <<Պահուստային ֆոնդ>> նախահաշվի 4891 հոդվածից պակասեցնել ընդամենը 912.0 հազար դրամ և հատկացնել համայնքի 2019 թվականի բյուջեի ֆոնդային մաս, ընդ որում

ա)300.0 հազար դրամ հատկացնել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>> նախահաշվի 5132 հոդվածին, հաշվապահական հաշվառման նոր ստանդարտներին անցնելու և հանրային հատվածի ՀԾ հաշվապահ 7 համակարգչային ծրագիր ձեռք բերելու նպատակով,

բ) 612.0 հազար դրամ հատկացնել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման <<Գյուղատնտեսություն>> նախահաշվի 5129 հոդվածին՝ համայնքի կարիքների համար տրակտորի 1 հատ կցորդ և հաստատուն հոսանքի էլ. եռակցման ապարատ ձեռք բերելու նպատակով:

Հաշվի առնելով նշված սարքավորումների ոչ թանկ լինելը, սարքին և նոր վիճակը, թույլատրել համայնքի ղեկավարին վերը նշված ապրանքների ձեռք բերման գնման ընթացակարգը կատարել մեկ անձից գնում կատարելու եղանակով:

2. Վարդենիկ համայնքի 2019թվականի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման <<Վարդենիկի ճանապարհային տրանսպորտ>> նախահաշվի 4251 հոդվածից պակասեցնել ընդամենը 500.0 հազար դրամ և հատկացնել նույն նախահաշվի 4267 հոդված՝ համայնքի կարիքների համար <<Աղ տեխնիկական՝ աղացած>> ապրանքի ձեռք բերման նպատակով:

| Համայքի ավագանի | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|

1. Ալեքսանյան Է.
2. Բադալյան Կ.
3. Բադալյան Ա.
4. Ջիրոյան Ս.
5. Ղազարյան Վ.
6. Մուրադյան Ա.
7. Մովսիսյան Ռ.
8. Պետրոսյան Գ.
9. Պետրոսյան Մ.
10. Սևոյան Ս.

Վարդենիկ համայնքի ղեկավար Հ.Հովեյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Վարդենիկ համայնք, հեռ026260086, vardenikgp@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

« 14 » հոկտեմբերի 2019 թվականի N 32

## ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 և 90-րդ հոդվածների, ինչպես նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

***Վարդենիկ համայնքի ավագանին որոշում է.***

Վարդենիկ համայնքի ղեկավարին ֆինանսական աջակցության նպատակով դիմած ներքոնշվող քաղաքացիներին, համայնքի 2019թ բյուջեից հատկացնել դրամական օգնություն յուրաքանչյուրին հետևյալ չափով.

| N | *Ազգանուն Անուն* | *հատկացվող գումարի չափը (դրամ)* | *գումարը բառերով (դրամ)* |
|---|---|---|---|
| 1 | *Սարգսյան Վալենտին* | ***30000*** | ***երեսուն հազար*** |
| 2 | *Գևորգյան Մկրտիչ* | ***40000*** | ***քառասուն հազար*** |
| 3 | *Ալոյան Սիլվա* | ***40000*** | ***քառասուն հազար*** |
| 4 | *Թովմասյան Ագապի* | ***50000*** | ***հիսուն հազար*** |
| | *ընդամենը* | ***160000*** | |

Ընդամենը 160.000 (մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ տրամադրվող դրամական օգնությունը վճարել գյուղապետարանի դրամարկղից:

| Համայքի ավագանի | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |

1. Ալեքսանյան Է.
2. Բադալյան Կ.
3. Բադալյան Ա.
4. Ջիրոյան Ս.
5. Ղազարյան Վ.
6. Մուրադյան Ա.
7. Մովսիսյան Ռ.
8. Պետրոսյան Գ.
9. Պետրոսյան Մ.
10. Սևոյան Ս.

Վարդենիկ համայնքի ղեկավար Հ.Հովեյան